8991

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«08» 08 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 203 - 25

Նախաձեռնող՝ *«ՕԳՕ» ՍՊԸ*
Երևան, Ալիխանյան փ. 12 շ., բն. 2

Գործունեությունը՝ *Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրում Երևան-Երասխ մայրուղու 18-20 կմ 1/3 հողամասում նախատեսվող հեղուկ վառելիքի լցակայանի կառուցում*
Արարատի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 203 - 25

«08» օգոստոսի 2025թ.

Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի Երևան-Երասխ մայրուղի 18-20 կմ 1/3 հողամասում նախատեսվող հեղուկ վառելիքի լցակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՕԳՕ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Շահումյան բնակավայր

Ներածական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արարատի մարզի Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրում, մոտակա բնակավայրից 450 մ, բնակելի, հասարակական, արտադրական, արդյունաբերական և այլ տիպի շինություններից առնվազն 300 մ հեռավորությունների վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 6 -րդ կետի բ. ենթակետի:

Նկարագրական մաս. Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել 03-074-0233-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N01072024-03-0008 վկայականը, 2025 թվականի հունվարի 15-ին Արարատի մարզի Արտաշատ համայնքի կողմից տրված N ՆԹ-0138-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Նախատեսվող գործունեության տարածքի հողի մակերեսը կազմում է 0.2 հա, կառուցապատման մակերեսը՝ 240.5 մ^2, կանաչապատման մակերեսը՝ 429.3 մ^2 բարեկարգման մակերեսը՝ 1330.2 մ^2:

Բնակչության սակավաշարժ խմբերի համար նախատեսվում են թեքահարթակներ, կայանման վայրեր, սանհանգույց:

Նախատեսվում է կառուցել ավտոմեքենաների հեղուկ վառելիքի լիցքավորման կայան, որտեղ տեղադրվելու են հեղուկ գազի, բենզինի, դիզվառելիքի լիցքավորման մեկական սյունյակներ: Լիցքավորման սյունյակները տեղադրվելու են շվաքարանների տակ: Կառուցվելու է 6.5 մ^3 տարողությամբ հեղուկ գազի ստորգետնյա պահեստ և բենզինի ու դիզելային վառելիքի կիսագետնափոր պահեստ՝ 4 հատ մետաղյա բաք (յուրաքանչյուրը 5,0 մ^3 տարողությամբ): Տեղադրվելու են երկու մետաղյա բաք՝ յուրաքանչյուրը 15,0մ^3 տարողությամբ, հակահրդեհային ջրի կուտակման համար, ինչպես նաև կառուցվելու է բաց ջրավազան՝ 10.0 մ^3 ջրի տարողությամբ և ստորգետնյա 120մ^3 ծավալով հակահրդեհային ջրավազան: Կառուցվելու է մեկ հարկանի վարչական շենք՝ 18,0 մX6,0 մ արտաքին չափսերով: Վարչական շենքում նախատեսվում է տեղադրել՝ լցակայանի ղեկավարման կետը, աշխատասենյակ, աշխատողների հանգստի սենյակ, սանհանգույցներ աշխատողների և հաճախորդների համար, պահասենյակ և պարզագույն ապաստարան: Լցակայանի տարածքը շրջակայքից մեկուսացվելու է ցանկապատով:

Ճանապարհների և փողոցների խաչմերուկներում տեսանելիության եռանկյունիների հավասարասրուն սրունքների չափը, տրանսպորտ-տրանսպորտ փոխհատման դեպքում 60 կմ/ժ արագության դեպքում համապատասխանաբար ընդունվել է 40 մ-ից ոչ պակաս հեռավորությամբ:

Համաձայն հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության, բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը կկազմի 10.62 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է:

Հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի ջրամատակարարումն իրականացվելու է համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների:

Խմելու ջուրը շինհրապարակ կմատակարարվի ջրի տարաներով՝ համաձայն պայմանագրի:

Կենցաղային կեղտաջրերը կոյուղու բակային ցանցի միջոցով ուղղվելու են 8 մ^3 ծավալով կեղտաջրերի անջրթափանց հոր, որտեղից հատուկ մեքենաներով հեռացվելու են կոյուղու ցանց, համաձայն պայմանագրի:

Անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն շինհրապարակին կից գտնվող 25մ^3 ծավալով պարզարան, որտեղ մեխանիկական նստեցումից հետո պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Էլեկտրամատակարարումը նախատեսված է համաձայն «ՀԷՑ»-ի կողմից տրված տեխնիկական պայմանների:

Շինարարական աղբը՝ 120կգ զանգվածով, ամբողջությամբ, տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բնակելի թաղամասի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել տարածքը: Կանաչապատվող տարածքի մակերեսը կազմելու է 429.3մ^2: Տարածքի ոռոգման համար նախատեսվում է կազմակերպել ցնցուղային ոռոգման համակարգ: Կանաչապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ 200մ^3 հողաբուսաշերտի ձեռքբերման վայրը կհամաձայնցվի տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Կանաչապատումը կիրականացվի ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներին համապատասխան:

Հողաբուսաշերտի հզորությունը կազմում է 0.2 մ: Հանվող բուսահողի ծավալը կկազմի մոտ 400մ^3: Շինարարական աշխատանքների ընթացքում այն կպահվի ծածկված վիճակում, այնուհետև կօգտագործվի տարածքի բարեկարգման նպատակով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին,

-շինհրապարակը լինելու է ցանկապատված,

-շինարարական աշխատանքների, փոշեգոյացնող աշխատանքների ընթացքում իրականացվելու է ջրցան,

-շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում,

-շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ,

-օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,

-պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացվելու է կարգավորում,

-շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,

- սորուն նյութերի պահեստները ծածկվելու են համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելելու է փոշու տարածումը,

-կանաչապատումն իրականացվելու է առաջնորդվելով Կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով,

-հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- շինարարական տեխնիկայի ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվելու դրանց աղմուկի մակարդակի ցուցանիշներին:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ:

Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս:

օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,

աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների իրականացման համար նախատեսվում է մասնահանել 1320 000 ՀՀ դրամ:

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, պատմության, բնության հուշարձաններ առկա չեն:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արարատի մարզի, Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի Երևան-Երասխ մայրուղի 18-20կմ 1/3 հողամասում նախատեսվող հեղուկ վառելիքի կայանի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Արարատի մարզի, Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև Արարատի մարզպետարանը, Արտաշատի համայնքապետարանը, կադաստրի կոմիտեն:

ՇՄԱԳ-ին կից փաստաթղթերում ներկայացվել է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի կողմից 2025 թվականի մարտի 11-ին տրված N 6842-25 եզրակացությունը:

Ստացված դիտողություններով և առաջարկություններով հաշվետվությունը լրամշակվել է:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոնն ու նորմերը:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արտաշատի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
5. Կառուցապատման աշխատանքների ժամանակ պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների ՀՀ օրենսդրությամբ սահմանված թույլատրելի մակարդակը:
6. Շահագործման ընթացքում հնարավոր պատահարները բացառելու և կանխարգելելու նպատակով ապահովել տեխնոլոգիական սարքավորումների, տեխնիկական միջոցների, օբյեկտի կառույցների, տեղակայանքների պարբերական տեխնկական զննումներ, ինչպես նաև կազմակերպել աշխատողների ուսուցում և որակավորման ստուգում:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՕԳՕ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի Երևան-Երասխ մայրուղի 18-20 կմ 1/3 հողամասում նախատեսվող հեղուկ վառելիքի լցակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան